

ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՆԱՐԵԿԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՈՒՐՁ

Յ. Ղ. ՄԻՐՁՈՅԱՆ

*Առանց կենսագրական տարրի բանաստեղծություն և,
առհասարակ, գրականություն չի եղել ու չի կարող լինել:*

Պարույր Սևակ

Ինչպես հայտնի է, բանասերները վաղուց ի վեր վիճում են Նարեկացու Մատյանի կառուցվածքի շուրջ, որն ըստ էության ունի երկու կողմ. ա) ինչպիսի՞նք է Մատյանի կառուցվածքը, բ) արդյո՞ք իրենց տեղում են Մատյանի ներկայիս ՂԲ և ՂԳ գլուխները: Ավելին, առանձին հեղինակներ կասկածի տակ են առել վերջիններիս ինքնուրույնությունը՝ համարելով դրանք թարգմանություն, իսկ ուրիշները դրանք դիտել են նույնիսկ այլոց կողմից գրված ու ավելացված: Քանի որ այդ կարգի բոլոր տեսակետների ու կարծիքների մանրամասն շարադրանքն ընթերցողը կարող է գտնել Մատյանի քննական հրատարակության ՂԲ գլխի ծանոթագրությունների բաժնում¹, ուստի սույն հոդվածում հարկ չեմ համարում անդրադառնալ դրանց, այլ կփորձեմ պարզապես արտահայտել իմ տեսակետը նշված հարցերի վերաբերյալ: Նարեկացիագետներից ոմանք գտնում են, որ Մատյանը չունի որոշակի կառուցվածք:

Իրավամբ հարց է ծագում. կարո՞ղ է Մատյանի նման գրական վիթխարի ստեղծագործությունը չունենալ որոշակի կառուցվածք, բայց մնալ ամբողջական ու կառուցիկ՝ դիմանալով հազարամյա հողմնահարության:

Ըիշտ է, որ առերևույթ դժվար է ստույգ որոշել, սահմանել ու սահմանադրել Մատյանի կառուցվածքը, որովհետև նրանում բանաստեղծի անձնական կյանքին առնչվող դեպքերն ու իրադարձությունները, փաստերն ու իրողությունները այնպես են շարադրված ու ներկայացված, որ, համաձայն միջնադարյան մտածողության, լինելով խիստ ընդհանրացված, վերացականացված ու համամարդկայնացված, հնչում են լոկ որպես խորհուրդ²: Ըստ այդմ, խախտված է նույնիսկ ժամանակագրության ավանդական սկզբունքը, այսինքն՝ եթե նման դեպքերում սովորաբար հեղինակները սկսում են անցյալից ու գալիս դեպի ներկան, ապա Նարեկացին, ընդհակառակը, ներկայից գնում է դեպի անցյալը՝ հայացքը հառած ապագային: Այս տեսակետից շատ կարևոր է Պ. Սևակի մի դիտարկումը: «Նարեկացու «Մատյանը», - գրում է նա, - մեր բանաստեղծության ամենածավալուն երկն է: Եվ նրա մշտախայտանք այլբախությանը համեմատելու համար մեր հայրենի բնությունը օրինակ չի տալիս. բաղդատության համար հարմար չի գալիս ո՛չ վաճառ ծովակը, ո՛չ էլ Սևանա լիճը. ծով է պետք, որ չենք ունեցել, ու եթե ունենք՝ հենց այս «Մատյանն» է: Բայց, ինչպես գիտենք, ծովերն անգամ արհուրդ ունեն: Եվ Նարեկացու ծովածավալ ու ծովատրոսի այս «Մատյանն» էլ ունի իր արհուրդը, որ կարելի է ձևակերպել ընդամենը երեք բառով. «ՄԵՂԱՅ - ԿՈՐԵԱ - ՈՂՈՐՄԵԱ»: Ավելի քան 8500 տողանոց այս գիրքը, ... որ ունի 95 գլուխ, գրված է

¹ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխատասիրությանը՝ Պ. Մ. Նաչատրյանի և Ա. Ա. Ղազիմյանի, Եր., 1985, էջ 1110-1112:

² Այդ մասին մանրամասն տե՛ս **С. С. Аверинцев**, Роскош узора и глубины сердца: поэзия Григора Нарекаци, в кн.: **Григор Нарекаци**, Книга скорбных песнопений. Перевод с древнеармянского и комментарий М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян, М., 1988, էջ 17:

ոչ այլ կերպ, քան հենց սույն եռամսանյա պարզ կադապարով. «մեղանչել եմ - կորչում եմ - փրկիր»¹: Ցավոք, Պ. Սևակը այնուհետև չի մանրամասնում, թե ինչու կամ ինչպես էր մեղանչել Նարեկացին, ինչու էր կորչում նա, և կամ ինչից պետք է Տերը փրկեր նրան: Այսուհանդերձ, «եռամսանյա պարզ կադապար» արտահայտությունն ինքնին շատ բան է ասում Մատյանի մասին: Մխաված չեմ լինի, եթե ասեմ, որ բանաստեղծ-գիտնականի ձևակերպած կադապարը, ըստ իս՝ բանաձևը, ամբողջությամբ և նրա բաղադրիչներն առանձին-առանձին ցույց են տալիս որոշակի սխեմայով տեղի ունեցող գործընթաց, այսինքն՝ այնպիսի գործընթաց, որի հիմքն ու պատճառը բանաստեղծի անցյալն է, հետևանքը՝ ներկան (Մատյանը կերտելու պահին նրա ունեցած հոգեվիճակը), իսկ դրանից դուրս գալու ելքն ու հույսը տեսնում է ապագայում: Եթե փորձենք սևակյան «եռամսանյա պարզ կադապարը» արտահայտել ժամանակային հասկացություններով, ապա կունենանք ժամանակի միագիծ հոսքը պատկերող «անցյալ-ներկա-ապագա» սխեման: Թվում է՝ նույնիսկ ավելորդ է հիշեցնել, որ եռատարր ժամանակի տարրերից իրական գոյություն են նշում միայն անցյալն ու ապագան, իսկ ներկան հանդես է գալիս լոկ որպես դրանք իրար միացնող ու իրարից զատող պահ: Ինչ վերաբերում է Մատյանին, ապա նրանում ներկան հենց Մատյանն ստեղծելու ընթացքն է, որը իբրև հոգեվիճակ, այսինքն՝ ցավ-զղջանքի և փրկության հույսի անզատելի միասնություն, իրար հետ կապում ու իրարից զատում է բանաստեղծի անցյալն ու ապագան: Ուշագրավ է, որ Նարեկացին թեև ժամանակը սովորաբար բաժանում է անցյալի, ներկայի ու ապագայի, բայց դրանցից առավել կարևորում է հատկապես անցյալն ու ապագան: Օրինակ, Մատյանի ԻԸ բանում հոեռորական հարցերի ձևով գրում է.

Եւ արդ, զո՞րս յայտնեցից
 Եւ յաղագս ո՞յց նշանակեցից
 Եւ վասն ո՞րպիսեաց ճառեցից
 Եւ զո՞րքան ծածկեալս մերկացուցից
 Եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց.
 Զներկայի՞ցս, զոր արդէն ունիմ,
 Թե՞ զանցելոցն, զոր մթերեցի,
 Զապագայի՞ցն, յորոց կասկածեմ,
 Թե՞ զբազմասահ շարժութեանցն, յորոց զլորեցայ...

Իսկ ահա Մատյանի ԾԵ գլխում ասում է. «Տարր ժամանակիս՝ յանեից , // Անցեալն՝ անյայտ, եւ ապառնին՝ կարծողական» (տ. 66-67): Փաստորեն, որպես ժամանակի տարր, ներկան ասես գոյություն չունի: Որ իսկապես Մատյանում մշտակա են հենց անցյալն ու ապագան և բանաստեղծը դրանց մասին գրում է տրամագծորեն հակադիր տրամադրությամբ, այսինքն՝ առաջինը հիշում է ցավով ու դառնությամբ, իսկ երկրորդին սպասում է ամենապայծառ տրամադրությամբ, լավագույնս տեսանելի է Մատյանի ԻԴ գլխում, որի Ա և Բ ենթագլուխներում կարդում ենք.

Եւ արդ, որո՞ց յանդրոց արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ
 աղերսել.

Արքայութեա՞նն, յորմէ վրիպեցայ,
 Թե փառա՞ցդ վայելչութեան, յորմէ զրկեցայ,
 Թե կենա՞ցդ անմահականաց, յորմէ հերքեցայ,
 Թե ընդ հրեշտական պարակցութեա՞ն, յորմէ տրոհեցայ,
 Թե ընդ արդա՞րսն մասնակցութեան, յորոց ճեղքեցայ,
 Թե ու՞ո որթոյն կենդանոյ, յորմէ քանցեցայ,

¹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Եր., 1974, էջ 247-248:

Թէ ո՞ստ տնկոյն բերկրութեան, յորմէ գաւսացայ,
Թէ ծաղի՞կ փառացն շնորհի, յորմէ թափեցայ,
Թէ պանծանա՞ցն ժառանգաւոր, յորմէ կորացայ,
Թէ հայրենի ծոցո՞յն հարազատ, յորմէ ընկեցայ:

Եթէ զգեստո՞վն լուսոյ պարծիմ, յորմէ մերկացայ,
Եթէ ի ստացո՞ղ դարձին յուսացայց, յորմէ խորթացայ,
Եթէ ի լուսո՞յն իղձս դիմեցից, յորմէ մեկնեցայ,
Եթէ Յիսուսի՞ յոսկերսն յաւոյիմ, յորմէ մերժեցայ,
Եթէ ի թեւս նորա՞ մերձիմ, յորմէ ատարացայ,
Եթէ յապաւե՞ճն ապաստանեցայց, յորմէ խեթացայ,
Եթէ ի փրկութեանն նորոգութի՞ւն, յորմէ մահացայ,
Եթէ ի զգաստութեանն զուարթութի՞ւն, յորմէ ես լքայ,
Եթէ ի կանո՞ճն կենաց ուխտի, յորմէ փոխեցայ,
Եթէ ի սահմա՞ճն հաստադրական, յորմէ սահեցայ,
Եթէ յանշարժ վիմի՞ն պնդութեան, յորմէ սասանեցայ,
Եթէ ի շա՞րս զումարտակին, յորմէ հոսեցայ,
Եթէ ի քաղա՞քն անդրանկաց շինիմ, յորմէ գերեցայ,
Եթէ հանապազորդեան հացի՞ն աղալթեմ, զոր ոչ վաստակեցայ,
Եթէ փոխադրութի՞ւն երկանցն խնդրեմ, յոր ոչ քրտնեցայ,
Եթէ պարգեւա՞քն պսակեցայց, յոր ոչ հանդիսացայ,
Եթէ արձա՞ն ինձ կենաց գրեցից, յորմէ ջնջեցայ,
Եթէ գերախտեացդ ձի՞ր յիշեցից, զոր միշտ մոռացայ:

Տողավերջի մեր ընդգծած բառերից դժվար չէ համոզվել, որ բանաստեղծը ամենատարբեր գործողություններ ցույց տվող երկու տառանյակից ավելի բայերով նշում է իր ունեցած կորուստներն ու զրկանքները: Դրանք կարդալիս ընթերցողը համակվում է անելանելիության ու անհուսության զգացումով, որն ավելի է սաստկանում ամբողջ Գ ենթագույնը և Դ ենթագլխի առաջին մասն ընթերցելիս: Բայց անհա զլխի 65-րդ տողից սկսած՝ կորույկ փոխվում է շարադրանքի տրամադրությունը, իսկ զլխի վերջում արդեն ընթերցողը լցվում է հույսով ու վստահությամբ, որ առ Աստված բանաստեղծի ունեցած անասան հավատն անպայման նրան փրկելու է նշված անհուսալի վիճակից:

Ի դեպ, Նարեկացու տրամադրության այս կորույկ փոփոխությանը մեզ մից դեռ շա՛տ առաջ ուշադրություն է դարձրել ականավոր հայագետ ու բացատրիկ նարեկացիագետ Գաբրիել Ավետիքյանը: Այդ փաստը չի վրիպել Մատյանի քննական բնագրի աշխատասիրողների ուշադրությունից, և Պ. Խաչատրյանը ծանոթագրել է. «Ինչպես Գ. Ավետիքյանն է նկատել, այս զլխի վերջին հատվածը շնչում է լուսավոր լավատեսությամբ: Տանջանքից, տրտմությունից ու ծայր հուսահատությունից Նարեկացին կարծես մեկնն անցում է կատարում և փարվում խորհրդապաշտի իր փրկության գաղափարին»:

Ձի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի...

Ծնչոյս ողջունի կապեալ ընդ շնորհիդ՝

Ի քեզ միանալ անբաժանելի:

Գլխի նման ավարտն անսպասելի չի կարող համարվել, որովհետև բանաստեղծն իր աղաչանք-աղերսը վարում է «երկոքումբ աչօք». մինչ մի աչքը պահում է իր «մեղքերի» վրա՝ ապրելով գղջում ու ինքնաձադկում, մյուսը՝ հույսի ու գթության վրա (հմտ. «Նարեկյունծ», էջ 111)՝: Ասվածին կցանկանայի ավելացնել

՝ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, էջ 1012:

միայն, որ քնարական հերոսի երկատված, երկփեղկված, երկաչք վիճակը՝ մեկը մեղքերի, իսկ «մյուսը՝ հույսի ու գթության վրա», բնորոշ է ոչ միայն այս գլխին, այլև ամբողջ Մատյանին և նրա գլուխներից շատերին: Ընդ որում, նայելով իր գործած «մեղքերին», Նարեկացին ոչ միայն զղջում ու ինքնապարսավում է, այլև ցավում ու ափսոսում է իր ունեցած ահավոր կորուստների համար, նաև բողոքում ու ընդվզում է իր հանդեպ գործված խստությունների ու դաժանությունների դեմ, ձաղկում ու պախարակում դրանց անմիջական ու միջնորդավորված հեղինակներին, նրանց գաղտնի ու բացահայտ, մարդկային ու անմարդկային մեթոդներով գործելակերպը՝ հույսը դնելով միայն Աստծու վրա: Ըստ այդմ, բանաստեղծը աներկբա գրում է.

Այլ ոչ ի մարդ ոք ունիմ գլոյս,

Եթէ անիծեալ ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ,

Այլ ի քեզ, տէր իմ ոգետէր (Բան ԻԱ, տ. 70-72)...

Արդ, արի՛, տէր, եւ մի՛ զարասցի, քան զքոյդ, աջ հողեղինի,

Մի՛ կշռեսցիմ ողորմութիւնք քո ընդ ջանից մարդկան (Բան ԾԹ, տ. 18-19):

Բարի է, ըստ իմաստնոյ ումեմն երջանկի,

Անկանել ի ձեռս տեսուն եւ մի՛ ի ձեռս մարդկան,

Զի որպէս մեծութիւն նորա՝ եւ ողորմութիւն նորին (Բան Հ, տ. 51-53):

Ի դեպ, Մատյանի կառուցվածքի միանշանակ որոշման դժվարությունը կանխավ զգացել է ինքը՝ Նարեկացին, ուստի «Յիշատակարան մատենիս դրութեան»-ում ներկայացնելով իր կատարած չափազանց ծանր աշխատանքը՝ ասում է, որ «ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արգասաւորի»: Նախ՝ այսքան բազմաբնույթ գործողությունները ինքնին վկայում են հենց կառույցի բարդության, վիթխարիության և ոչ միանշանակության մասին: Երկրորդ, դրանք բոլորը ասես վերաբերում են ոչ թե գրական ստեղծագործության, այլ ճարտարապետական վիթխարի համալիրի արարմանը: Երրորդ, այն բաղկացած լինելով տարաբնույթ ու տարասեռ շինություններից՝ այնուամենայնիվ կազմում է մեկ միասնական այնպիսի ամբողջություն, որտեղ փնտրողը կարող է գտնել ցանկացած մեծության, ձևի ու ոճի ենթակառույց: Եվ բնավ պատահական չէ, որ, իբրև Մատյանի առաջին գնահատող, հեղինակն ինքն այն կոչել է «հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան»: Ավելին, դիմելով Մատյանի ընթերցողներին կամ իր բառերով ասած՝ «յայսմ սեղանոյ» ճաշակողներին՝ այն որակում է որպէս «յոզմարէն եւ այխորժահամ» զարդարված:

Բայց որքան էլ բարդ է Մատյանի կառուցվածքը, և դժվար է որոշակի բան ասել դրա մասին, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ այն ստեղծվել է շուրջ երեք տարում: Իսկ դա նշանակում է, որ այդ ընթացքում անընդհատ փոփոխվել են բանաստեղծի հոգեվիճակները, տրամադրությունները, զգացմունքներն ու մտածմունքները, որոնք դրոշմվել են ամբողջ կառույցում ու նրա առանձին դրվագներում: Հետևաբար, դրանց մանրագին ուսումնասիրությունը կարող է թեկուզև մոտավոր պատկերացում տալ նրա կառուցման ընթացքի, ամբողջ կառույցի ու նրա տարրերի մասին: Հենց այդ տեսանկյունից մոտենալով Մատյանին՝ եկել ենք այն եզրակացության, որ Նարեկացին այն հիացել ու իրականացրել է Ս. Պատարագի մնացած մասում ու տրամաբանությամբ: Այդ է հուշում ոչ միայն այն փաստը, որ Մատյանի առաջին գլխից մինչև վերջին գլուխը անընդհատ հնչում է պատարագի գաղափարը, և բանաստեղծն իրեն համարում է կենդանի զոհ, իսկ Մատյանը՝ «կամատրական նուէր բանական զոհիս», այլև

Մատյանի և Ս. Պատարագի⁵ կառուցվածքների համեմատությունը:

Ինչպես գիտենք, Ս. Պատարագը բաղկացած է երկու մասից՝ «Երեխայից (չմկրտվածների) պատարագ» և «Հավատացյալների պատարագ» կամ բուն պատարագ⁶: Ժիշտ նույն ձևով էլ Մատյանն է բաժանվում երկու մասի, որոնցից առաջինն ընդգրկում է Ա-ԾԴ, իսկ երկրորդը՝ ԾԵ-ՂԵ⁷ գլուխները: Առաջին մասում բանաստեղծն իր օրինակով աներևակայելի խորությամբ ու բազմակողմանիությամբ գնում, քննում, քննարկում ու վերլուծում է երկրային մարդուն, բացահայտում նրա հոգում տեղ գտած թերությունները, թուլությունները, արատներն ու ախտերը, իսկ երկրորդում հանճարեղորեն ցույց տալիս այդ ամենից մաքրվելու, ձերբազատվելու ու երկնայինն հավասարվելու գերմարդկային ճիգ ու ջանք պահանջող ճանապարհը: Քանի որ Մատյանը գրված է ճիշտ Պատարագի նմանությամբ ու կառուցվածքով, ըստ այդմ հասկանալի ու միանգամայն տրամաբանված է ԼԴ գլխի առկայությունը հենց Մատյանի առաջին մասում: Չէ՞ որ Պատարագում ևս Նիկիայի հավատի հանգանակը գետեղված է առաջին մասում՝ Երեխայից (չմկրտվածների) պատարագում: Ուշագրավ է, որ այս գլխում Նարեկացին անուղղակիորեն ակնարկում է Մատյանի երկու հատվածների մասին: Նա Տիրոջից խնդրում է. «Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ» (տ. 10-11): Փաստորեն մի կողմից ասում է, որ երկրային մարդու սիրտը ըստ էության մնում է կարծրացած, իսկ մյուս կողմից ձգտում է հաղորդակից դառնալ Աստծու հոգևոր սերմի արգասիքներին, որոնց իսկապես կարողանում է հասնել Մատյանի երկրորդ մասում:

Մատյանի առաջին մասում բանաստեղծը երկրային մարդու հոգին գնում է իր օրինակով, այստեղից էլ հյուսել է իր անցած կյանքի պատմությունը, հասկանալի է, ուշադրություն դարձնելով ոչ թե և ոչ այնքան ժամանակագրական մանրամասների, որքան իր ունեցած զրկանքների ու տառապանքների, կրած չարչարանքների ու դժվարությունների, հաղթահարած արգելքների ու խոչընդոտների, կատարած գործերի ու փայփայած հույսերի, վերջիններիս խորտակման ու իր ստացած պատժի, վերջապես՝ իր ահավոր կորուստների, հոգեմտավոր սարսափելի ճգնաժամի և դրանից դուրս գալու համար գործադրած ջանքերի վրա: Իսկ ինչի՞ց է երևում, որ Մատյանի առաջին մասում Նարեկացին իսկապես թողել է ինքնակենսագրական այդքան հարուստ նյութ: Հարցի լավագույն պատասխանը տրված է հենց առաջին մասի վերջին գլխում (ԾԴ), որի Ա ենթաօգլխում դիմելով Աստվածորդուն՝ գրում է.

Դա՛րձ առ իս գթութեամբ եւ հանդերձեցե՛ս
Դառնալ առ քեզ ինձ կրկին բերկրութեամբ,

⁵ Մատյանի և Պատարագի նմանության վրա ուշադրություն է դարձրել նաև Գր. Պլըտյանը. «Ըստ իս,- գրում է նա,- Պատարագը Մատեանին մէջ ունի յարացուցային արժեք, իբրև կրկնումիւն բնատիպը եւ ոչ անշուշտ Գրիգորի կրօնական գործունեութեան, այսինքն՝ կենսագրութեան մէկ տուեալը» (Գրիգոր Պլըտեան, Գրիգոր Նարեկացի լեզուի սահմաններում մէջ. Վենետիկ-Ս. Ղազար, 1985, էջ 41): Ինչպես դեռ կտեսնենք, այդ նմանությունը ոչ թե «յարացուցային» է, այլ, ըստ էության, կենսագրական:

⁶ Այդ մասին տե՛ս Վազգեն Վարդապետ, Մեր պատարագը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1989, էջ 72: Ի դեպ, Վազգեն Վարդապետը նույն ինքը երջանկաճիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Գիրքը տպագրվել է նախ՝ Բուխարեստում (1945 թ.), իսկ այժմ՝ Էջմիածնում:

⁷ Թյուրիմացությունից խուսափելու համար ասեմ, որ, իմ կարծիքով, ՂԲ և ՂԳ գլուխները բանաստեղծը գրել է ներկայիս ՂԵ գլխից հետո և այն էլ՝ որոշ ժամանակ անց, ուստի ներկա դեպքում ԾԵ-ՂԵ գլուխներ ասելով հասկանում ենք առանց ՂԲ և ՂԳ գլուխների:

Ջի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ,
Եւ եթէ ոչ կամք քո գթասցին,
Ոչ գարեմ փրկիլ մահու պարտականս,
Եւ եթէ ոչ կառավարոյ յարդարեացես պատրաստել ինձ
Հետս ճանապարհի, որ առ քեզ բերէ,
Վիճ է ինձ խորոց յաջմէ եւ յահելէ:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն իրեն զգում է անհուսալիորեն կործանված, որից կարող է փրկվել միայն Տիրոջ կամքի գթությամբ, իսկ եթե հանկարծ Տերը չգթա ու չշրջվի դեպի բանաստեղծը, ապա ոչ մի կերպ նա չի կարող փրկվել: Ավելին, եթե կառավարիչ Աստվածը չօգնի իրեն հարդարելու առ Աստված տանող ճանապարհը, ապա դա իր համար կլինի խոր վիճ աչից ու ձախից: Այս տեսակետից չափազանց խոսուն է հատկապես Դ ենթագրությունը.

Եւ քանզի ի ծուփս բազմավտանգս
Ալետանջ հողմոյ սաստկապէս զգունեալ,
Ուժօրն լկանաւք իսպառ տագնապամբ ի ծովին՝
Փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական ողորիչ,
Առ որս զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ,
Իբր ի հոսանաց բոնութեան զարնանազայր գետոց
Արտաձգեալ յակամայ ընթացս ողորմօրն զլորման,
Ջրակուլ, ոգեսպառ պղտորարբութեամբ,
Դաժանահոտ, սկախառն, մամուարմատ, խառնախոփ,
Մահաբեր երկամբք վանեալ,
Ըստ որոց յուղխիցն հեղեղիցին հեղձուցեալ,-
Այսու առակաւ եւ ես՝ եղկելիս.
Խաւսին՝ եւ ոչ իմանամ,
Գոչեն՝ եւ ոչ ինչ լսեմ,
Բարբառին՝ եւ ոչ զարթնանամ,
Հնչեն՝ եւ ոչ փոխադրիմ,
Փողեն՝ եւ ոչ զումարիմ,
Վիրաւորիմ՝ եւ ոչ ևս զգամ,
Կոոցն զարշութեան նմանեալ՝
Թափոր յազդմանէ բարեաց իմաստից:
Արդարեւ չար առաւել յաւէտ իսկապէս,
Քան զաւրիճակդ ճշմարտութիւնս, ատելի եւ մեղադրելի
Եւ ատենին Բրիստոսի արժանապէս մատնելի:

Բանաստեղծն ասում է, որ ինչ-որ պահի ինքն արդեն կյանքի ծովում փչող հողմերից հոգնած, զզված ու ահավոր լկանքներից խիստ տագնապահար վիճակից հանկարծակի հայտնվել է զարնանային վարար գետի հոսանքում, որտեղ խեղդվողի հուսահատ ու ջղաձիգ շարժումներ կատարելով՝ ասի է նետվել ջրահեղձ-անշնչացած-անզգայացած: Դիտելի է, որ Մատյանի ԻԵ գլխում Նարեկացին վաղուց փրձնած լինելով կյանքի ծովում իր նավակ-տապանակի հանկարծահաս կործանման հիասքանչ տեսարանը, դրան անմիջականորեն նախորդած իր հոգեվիճակը ներկայացրել էր միանգամայն այլ գույներով ու պատկերներով: Այնտեղ ասված է. «Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյսն վստահութեամբ, // Դոյզն կասկած արկածից ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին, // Որ ի մէջ հանգստեանն եւ աշխատութեանն, // Իբր այն թէ հասեալ իցեմ, // Ձմեռն յամարայնի բքաբեր հողմով ժամանեալ՝» Երեքայեանն դիմակցութեամբ ամբոխեաց զհանդարտութիւնն, // Ուստի նաւն ի բախմանէ վայրենի պէտացն խորտակեցաւ» (տ. 16-22):

Իրավամբ հարց է ծագում. իսկ ինչու՞ բանաստեղծը ժամանակի երկու տարբեր պահերին կյանքի ծովում իր ունեցած հոգեվիճակները պատկերում է իրարից այսքա՛ն տարբեր, եթե չասենք հակադիր գույներով⁹: Համաձայն բանաստեղծի նկարագրածի՝ առաջին դեպքում նավարկելիս է եղել անհոգ, անկասկած ու ինքնավստահ՝ շուտով ափ հասնելու սպասուով, իսկ երկրորդ անգամ՝ հողմահար, զզված, լլկված ու տազնապահար: Ընդ որում, առաջին անգամ նավը պարզապես խորտակվել է, բայց ինքը ծովափին «ձեռն ի ծնատի եղեալ» խորհրդածում է նավի խորտակման պատճառների շուրջ՝ միաժամանակ երազելով նրա վերականգնման հնարավորությունների մասին: Ընդհակառակը, երկրորդ դեպքում ծովից հանկարծակի նետվում է զարնանային վարար գետի ամեհի հոսանքի մեջ, որից պատահմամբ փրկվում ու ափ է շարտվում ջրահեղձ ու անշնչացած: Մատյանի մանրագին ուսումնասիրությունից գալիս ենք այն համոզման, որ այս վիճակներն արտացոլում են հեղինակի կյանքում տեղի ունեցած իրական կտրուկ փոփոխությունները: Ինչպես արդեն ցույց ենք տվել մեր նախորդ հոդվածներից մեկում¹⁰, բանաստեղծը որպես հավակնորդ մասնակցել է 992 թ. կայացած կաթողիկոսական ընտրությանը, բայց կրել է պարտություն, որից հետո այնքան են սրվել պարտված Նարեկացու և ընտրված կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու հարաբերությունները, որ 997 թ. ավարտվել են բանաստեղծի կարգալուծությամբ: Հետևաբար, ծովային վերոհիշյալ պատկերներից առաջինը, իմ խորին համոզմամբ, խորհրդանշում է 992 թ. բանաստեղծի կրած պարտությունը, իսկ երկրորդը՝ 997 թ. կարգալուծության փաստը: Որ իսկապես Մատյանի առաջին մասում՝ 1-54 գլուխներում, հիմնականում պատկերված է բանաստեղծի մինչ այդ ապրած կյանքը, պարզորոշ երևում է Մատյանի 54-րդ գլխի վերջին ենթագլխից, որը բաղկացած է ընդամենը հետևյալ տողերից, բացի վերջին՝ «Ամեն»-ից.

Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ
Աստեացս պարտեաց զայս կտակ թողի՝ որոց ընթեռնուն,
Իմովս բանի առ աստուած կարդալ հանապազորդութեամբ,-
Այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեան
Մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ,
Չոր գիրդ՝ ընդ մարմնոյս, եւ բանդ՝ ընդ հոգւոյս
Չանսահմանելիդ միշտ թախանձեսցէ,
Իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս ի յիմոյս ձայնէ,
Բարեգութ, մարդասէր, արհնեա՛լ յաիտեանս:

Փաստորեն բանաստեղծն ասում է, որ ինքը Մատյանի առաջին մասը՝ Ա-ԾԴ գլուխները, որպես «անդառնալի ուղւոյն յիշատակ» կտակ է թողել¹⁰ երկրային

⁹ Այս կապակցությամբ դժվար է համաձայնել Ս. Ս. Ավերինցևի այն հարցադրման հետ, որ «ծովի» այլաբանությունը Նարեկացու համար ոչ միայն զուրկ է կոնկրետությունից, այլև կոնկրետությունը սկզբունքորեն հակացուցված է նրան (տե՛ս Շ. Շ. Аверинцев, նշվ. աշխ., էջ 18):

¹⁰ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու առեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1:

¹⁰ Մտադրություն չունենալով անդրադառնալու Մատյանի աշխարհաբար թարգմանությանը, այնուամենայնիվ հարկ եմ համարում նշել, որ «Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ // Աստեացս պարտեաց զայս կտակ թողի՝ որոց ընթեռնուն» տողերը վ. Գևորգյանը թարգմանել է՝ «Բանզի ընկնելով անդարձ ճանապարհ՝ // Ընթերցողներին կտակն այս պիտի // Թողնեն հիշատակ երկրային պարտքիս» (ընդգծ. իմն է. - Հ. Մ.). իսկ Մ. Խեռանյանը՝ «Եւ քանզի անդարձ ճանապարհի համար իմ այս կտակը. // Որպես հիշատակ աշխարհում գործած մեղքերի՝ թողի ընթերցողներին» (ընդգծ. իմն է. - Հ. Մ.): Փաստորեն թարգմանիչները թողի բառը թարգմանել են տրամագծորեն հակադիր իմաստով՝ մեկը ապագայի, իսկ մյուսը՝ անցյալի: Բնականաբար, երկուսից մեկը ճիշտ չէ:

կյանքի պարտքերի համար, որպեսզի ընթերցողներն իր խոսքերով հարածամ առ Աստված կարդան և դա լինի «սահման յանձնառական խոստովանութեան»: Առաջին հայացքից թվում է, թե Նարեկացին սկզբում մտադրություն է ունեցել այստեղ վերջակետ դնելու, բայց դա պարզապես թվում է, որովհետև, ինչպես տեսանք, ի սկզբանե որոշել է առաջին մասում ներկայացնել երկրային մարդուն, իսկ երկրորդ մասում ցույց տալ երկրից վեր բարձրանալու, աստվածային հոգևոր սերմի պտուղներին հաղորդակից լինելու տառապալից ուղին: Ըստ այդմ, Մատյանի թվացյալ ավարտվածության տպավորությունը ցրելու համար հեղինակը գրական շատ նուրբ հնարանքով անցում է կատարում երկրորդ մասին կամ բուն Մատյանին, որովհետև հենց Մատյանի երկրորդ մասում է, որ ցուցադրում է հողեղեն մարդու երկրային կյանքից վեր բարձրանալու, աստվածային անմնացորդ հաղորդակից դառնալու զարմանահրաշ օրինակ: Եվ պատահական չէ, որ, նրա համոզմամբ, Աստվածն իրեն ներելու և փրկելու է հենց Մատյանի այս հատվածում իր դրսևորած վերմարդկային, աստվածային մտածողության համար: Մատյանի երկրորդ մասի հենց սկզբում ասում է.

Եւ վասն զի սլացեալ ոգոյս թեալք
Ի թիս անբաւից ծննդոց մարդկան՝
Եդի ի կշիռս իմանալեացս մտաց,
Ոչ գտի համեմատ զոք ինձ պարտաւոր,
Եւ առ այս գղաւթեան սաղմոսին զբան ի յերգ ինձ առի՝
Դառն կշտամբութեան գաւազանաւոր գործավար.
Ո՞վ յարիցէ ընդ իս ի չարիս հաւասարել յանաւրէնութիւնս:
Եւ քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ
Եւ ճմարտեցաւ առ այրս մահու,
Եւ ես վկայեմ կրկին հաստատեալ,
Առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ,
Քան ինովս բանի բազմաց տարագրիլ,
Թերեւս սովիմք առ այսու արդեւք եւ ինձ շնորհեացես՝
Ծնորհողիս զպարտիս իմոցն:

Ու քանի որ ինքը մտքով սլացել է մարդկային բազում սերունդների մեջ, բայց ոչ մեկին չի գտել իրեն «պարտաւոր», որպեսզի իր անուցից առ Աստված դիմի, ուստի որոշել է, առաջնորդվելով սաղմոսեբզոսի խոսքերով (ՂԳ, 16), անձամբ միայն վճանել, քան իր խոսքերով «բազմաց տարագրիլ»: Ըստ այդմ, առաջին բանը, որ խնդրում է Աստծուց՝ ներելն է իր բոլոր թշնամիներին: Այսինքն՝ բանաստեղծը հույս ունի, որ իր պարտապաններին ներելու շնորհիվ Աստված էլ կշնորհի իր ունեցած պարտքերը (հիշենք Տերունական աղոթքի հանրահայտ տողերը): Հենց այդ հույսով ու հավատով էլ հաջորդ ենթագլխից հնչեցնում ու անընդհատ խորացնում է թշնամիների հանդեպ ներողամիտ լինելու գաղափարը.

Եւ արդ, զի՞նչ քեզ աղերս հաճոյական ի յայսմ եւ ի սոյն
Եւ ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից,
Գովեալ թագաւոր երկնաւոր Քրիստոս,
Եթէ ոչ գառ ի յինէն անիծեալսն արհնել աղաւթեմ,
Զկապեալսն արձակել, ազատել զդատապարտեալսն,
Բարեգործել զճզովեալսն, պսակել զթշնամանեալսն,
Սփոփել զտրտմեցեալսն, դարմանել զխորտակեալսն...

Ամբողջ Մատյանը լինելով մարդկային սխրագործության բացառիկ օրինակ, ինձ թվում է, ամենադժվարին, պիճնավեհ, ամենալուսավոր ու աստվածահաճո առաջին քայլը կատարված է հենց այս տողերում: Եվ պատահական չէ, որ

Նարեկացին, Աստծուց խնդրելով ներել իր գործած մեղքերը, իբրև ներման արժանիության հիմք ու չափանիշ մատնանշում է իր հենց այս քայլը.

Ես՝ տառապեալս ամենաթշուառ,
Ի վերջին սպասատրութեան մաղթանաց այսր մատենի,
Ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝
Փակեալ առ ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն,
Եւ դժնէից նենգողացն իմոց՝
Ընդ բարիսն ի բոլոր սրտէ հաշտութեան արգահատեցի,
Վասն որոց եւ ծունր պաղատանաց կրկնեցի:
Ո՛րչափ դու ինձ, ահա յայց ելեալ,
Առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան,
Գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացոյիս,
Հզարդ՝ տկարիս, ամենակարդ՝ վարանելոյս,
Իմաստութեանդ աղբիւր՝ յիմարիս եւ թմբելոյս:

Մատյանի երկրորդ մասի երրորդ գլխում (Բան ՄԷ, տ. 45-52) բանաստեղծը, գիտակցելով իր այս քայլի իմաստն ու կարևորությունը, Աստծուն իր հանդեպ բարյացակամորեն տրամադրելու համար ասում է՝ եթե ես կարողացա ինքս ինձնից վեր բարձրանալ ու ցուցաբերել անօրինակ կամք՝ ներել իմ թշնամիներին, ապա մի՞թե Դու, Աստված, որ բարությունը հենց Քո էությունն է, նույն ձևով չպիտի ներես ինձ.

Դու քոյոյս զիա՞րդ ոչ կրկին մատուցես, հզար,
Ծանճուազդ առատութենէ:

Ծարունակելով Աստծու հետ իր երկխոսությունը՝ Մատյանի ԶԳ գլխում արդեն կատարում է վեհանձնության չտեսնված ու չլսված մի նոր քայլ. մտածելով, որ Տերը կարող է բարկանալ իր թշնամիների վրա ու պատժել նրանց՝ Աստծուց խնդրում է նրանց հետ վարվել իբրև չարին կշտամբողների ու իրավամբ նախատողների.

Թիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան
Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,
Եւ արա կատարեա՛ ճոցին քաւութիւն եւ ողորմութիւն:
Մի՛ բարկացիս ճոցս վասն իմ, տէր,
Իբրեւ զսուրբս բամբասողաց,
Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս,
Այլ որպէս զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝
Ներեա՛ յանցանաց ճոցս:

Այս նույն գլխի շարունակության մեջ (տ. 24-45), Աստծուն հիշեցնելով նրա անսահման մեծությունը ի հակադրություն իր անկատարության, Նարեկացին ցանկանում է, որ Աստված թե՛ իր թշնամիներին և թե՛ իրեն մաքրի երկրային արատներից ու ախտերից և արմատավորի բարի գծեր:

Արդ, յիշեա՛ զքո մեծութիւնդ, տէր,
Նայեցեալ ի յիմս անարգութիւն,
Եւ ընդ խնդրելս իմ ի քէն բարի՛ իմոցն ատելեաց,
Եւ դու առ քոյս, ըստ քում մեծութեանդ,
Անճառելի՛ս հրաշագործեսցես:
Մի՛ սատակեսցես զիմսն խածանողս, այլ փոփոխեսցես՝ս,
Խլեալ զխոտան բարս երկրաւորս՝
Զբարի՛սն արմատացուցես եւ յիս եւ ի նոսին,

Մանաւանդ զի դու լոյս ես եւ յոյս,
 Եւ ես՝ խաւար եւ յիմար,
 Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
 Եւ ես՝ համայնին չար, ապիկար,
 Դու՝ տէր ստորիցս եւ երկնից,
 Եւ ես՝ անիշխան շնչոյս եւ հոգւոյս,
 Դու՝ բարձրեալ, ի կարեաց զատեալ,
 Եւ ես՝ տաժանատր եւ վտանգատր,
 Դու՝ ի վեր քան զկիրս երկրիս,
 Եւ ես՝ կաւ անարգութեան, գարշութեան,
 Դու, ըստ մարգարէիցն, մնաս յաիտեան յանբաւ բարձրութեան,
 Եւ ես միշտ կորնչիմ՝ ըստ նորին բանին,
 Ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն,
 Եւ ես բովանդակն իսկ իցեմ, որ զաւանդն իմ ոչ պահիցեմ:

Վերջապէս, Դ ենթազլխում կատարում է երկրածինի համար, թեկուզ նա լի-
 ցի հանճարեղագույն բանաստեղծ, աներևակայելի, առ Աստված հասնող վերաս-
 լաց թոխչք. բացատրում է, թե ինչու ինքը խնդրում է նախ՝ բարություն անել իր թշ-
 նամիներին և նոր միայն իրեն ու իր բարեկամներին: Բանն այն է, ասում է բանաս-
 տեղծը, որ բարեգործներին բարիք ցանկանալը բնության օրենք է, ուստի և՛ բոլո-
 րին հասկանալի, մինչդեռ թշնամիներին ներելը, առավել ևս բարի ցանկանալը
 արդեն վերբնական կամ գերբնական, այսինքն՝ անսովոր ու արտասովոր երևույթ
 է: Եվ հենց այդ է Նարեկացու իրական մեծությունը, քանզի քաջ հասկանալով, որ
 դա ըստ էության զուտ աստվածային հատկանիշ է, այնուամենայնիվ փորձում ու
 հասնում է դրան.

Եթէ արեգակնս այս անկենդան,
 Ստեղծեալ առ ի քէն երկրիս մատակարար,
 Ջկարակումն մարից ցամաքէ
 Եւ զտհաս պտուղս հասուցանէ,
 Իսկ ստացողդ ամենից՝ Հոգիդ աստուծոյ,
 Ո՛րքան զարեցես զտիղմ չարեաց աղտոյ
 Եւ զթարախ պղծութեան մեղաց մթերից իսկոյն սպառել:
 Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ ի քէն բարի՝
 Ատելեացն իմոց ի կարգ այս բանի,
 Ջի գհերքեալ վնասակարս պարտոց մահու
 Յամենախնամ աչաց հգարիդ մի՛ մերծեսցես, արհնեալ գթութիւն:
 Արդ, կենագործեա՛ զիս՝ զամենամեղս, անդամաւք մարմնոյս,
 Ընդ բնութեան հոգւոյս՝ խորհել միշտ զքոյսդ:
 Իսկ բարեգործացն խնդրել բարիս՝ բնութեանն են արէճք,
 Անբնադատ կրիցն յարակցապէս առ սոյնս բերումն:
 Թանգի, արդարեւ, առ միդ այդ պատուէր ամենայն հասակ
զարանայ,
 Իսկ միւսոյդ՝ երկրորդի առաջնովդ խնամով հանդիպել՝
 Աստուածականիդ է նմանութիւն,
 Յաղագս այսր իրի նախնի դասեցի
 Ջթշնամեացն իմոց աղերսանս,
 Թան զերախտաւորացն բարիս:

Ինչպէս տեսնում ենք, Մատյանի երկրորդ մասում բանաստեղծը, անհամե-
 մատ վեր բարձրանալով ինքն իրենից, ըստ էության դրսևորում է աստվածային
 մտածողություն, որին հասնում է ինքնապատարագմամբ: Հետևաբար, եթե ասում

ենք, որ Մատյանը գրված է Պատարագի մնանությամբ, ապա նախ՝ դա չպետք է հասկանալ որպես բացարձակ նույնականություն: Երկրորդ, մեկընդմիջտ պետք է հիշել, որ Նարեկացին ընդհանրապես չի սիրում կրկնություն կամ մնանակում: Երրորդ, նույնականության կամ մնանակման դեպքում մենք կունենայինք ոչ թե բանաստեղծական հանճարեղ ստեղծագործություն, այլ արձակ սկզբնաղբյուրի չափածո վերարտադրություն: Այստեղից էլ այն ահավոր դժվարությունը, որ ծագում է Պատարագի և Մատյանի գաղափարական ու կառուցվածքային մնանությունը հաստատելու ճանապարհին: Եթե դրանց առաջին մասերի մնանությունը հաստատեցինք հատկապես Նիկիայի հանգանակի առկայությամբ, ապա Հավատացյալների կամ Բուն Պատարագի և Մատյանի երկրորդ մասի մնանությունը կփորձենք փաստել դրանց համապատասխան տեղերի համեմատությամբ: Ինչպես գիտենք, Հավատացյալների պատարագի սկզբում, երբ «վերաբերումից անմիջապես հետո քահանան կրկին անգամ լվանում է իր մատները, որպես մաքրության ու անարատության նշան»¹¹, այդ ընթացքում հնչում են Սարկավագի պատվեր-խոսքերը, որոնք, Վազգեն Վարդապետի բառերով ասած, «Մտածումի և զգացումի ազնվության գոհար գաղափարներ են, ճշմարտապես դաստիարակիչ և հոգեփոխիչ պատգամներ, որոնք մարդուն բարձրացնում են դեպի հոգևոր-բարոյական աշխարհի կատարները»¹²: Բերենք Սարկավագի խոսքերը. «Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ՝ ահիւ. մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ եւ խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան՝ կացցուք յաղօթս առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք զողորմութեան զընորհս յաւուր Յայտնութեան եւ ի միսսանգամ գալստեանն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Կեցուցէ՛ եւ ողորմեսցի՛»¹³ (ընդօժ. հեղ. է. - Հ. Մ.):

Հայտնի է, որ Մատյանի 75-րդ գլուխն ունի դավանաբանական բնույթ, այսինքն՝ նրանում Նարեկացին շարադրում է եկեղեցու մասին իր ըմբռնումները, ուստի այն գրված է արձակ ձևով և ունի տասներեք ենթագլուխ: Դրանցից Սարկավագի խոսքերին խիստ համահունչ է հատկապես է ենթագլուխը, որտեղ բանաստեղծը շարադրում է դավանանքի մասին իր պատկերացումը՝ տալով գրեթե նույն պատվերները՝ հաճախ պահպանելով նույն հասկացությունները, փոխելով դրանց հաջորդականությունն ու դրսևորման ձևը: Օրինակ, եթե Սարկավագն ասում է, որ Աստծու Սուրբ Սեղանի առջև աղոթքի կանգնենք «ուղիղ վարուք», ապա Նարեկացին գրում է. «Դաւանեմք ի հաւատ ուղիղ եւ անխտորնակ անբծութեան»: Կամ եթե Սարկավագն ասում է, որ Սուրբ Սեղանի առջև կանգնեք «մի՛ խղճիւ և գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ եւ խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ»¹⁴, ապա Նարեկացին գրում է. «Մի՛ ի սմա լուացումն ի մահն Քրիստոսի, զի մի՛ յանգէտս անարգեալ աստուածութիւնն՝ ի ծանուցելումն զնախնին կրեսցէ: Մի՛ ձեռնադրութիւն ի պատիւ ւածութեան լուսոյն, զի մի՛ յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի: Մի՛ եւ շնորհաւք, քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի՛ ճշմարտութիւնն կերպարանաւք խորամանկեսցի: Մի՛ լընտրութիւնն ապառնի՝ հաւատ, զի մի՛ սպառնալիք հատուցմանն գրոյցս ինչ ատարաբար համբաւոյ գրեսցի:

¹¹ Վազգեն Վարդապետ, նշվ. աշխ., էջ 76:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 76-77:

¹⁴ Նույն տեղում, էջ 76:

Մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին եւ առ արտաքին՝ չարի եւ կամ բարոյ փոխաւորութիւնն կարծեսցի՝ յանմահ գաւրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընտելութեամբ երկրպանոյս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի: Մի յոյս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներկեւանութիւն խոստացելոցն ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի» (ընդգծ. իմն է,- Հ. Մ.): ԹՎում է՝ իրավունք ունեւ ասելու, որ թե՛ Սարկավագի խոսքերի և թե՛ Նարեկացու գրածի մեջ տեսանելի են ոչ միայն նույնանման մտածողություն, այլև առանձին ընդհանուր բառեր ու արտահայտություններ: Դիտելի է, որ բանաստեղծը երբեմն գտել է նույն բառի հոմանիշը՝ ասես չլրկնելու համար Սարկավագի համապատասխան բառը: Օրինակ, Սարկավագի «մի՛ երկմտութեամբ» արտահայտության դիմաց Նարեկացին գործածում է «աներկեւանութիւն» բառը, որ նշանակում է՝ «աներկբայութիւն. և անկեղծութիւն. զուարթութիւն» (ՆՀԲ, հ. Ա, էջ 141): Կարծում եմ՝ վերը ասվածը հիմք է տալիս ոչ միայն հաստատելու Պատարագի և Մատյանի նմանության մասին դրույթը, այլև եզրակացնելու, որ Մատյանի 75-րդ գլուխը, ունենալով դավանաբանական բնույթ, նույնքան անհրաժեշտ ու տրամաբանված է նրա գոյությունը Մատյանի երկրորդ մասում, որքան ԼԴ գլխինը՝ առաջին մասում:

Հիմք ընդունելով Պատարագի և Մատյանի նմանության մասին մեր դրույթը՝ փորձենք պատասխանել մեր երկրորդ հարցին. արդյո՞ք իրենց տեղում են Մատյանի ներկայիս ՂԲ և ՂԳ գլուխները: Այս հարցը նարեկացիագիտության առջև ծառայած է վաղուց ի վեր: Եվ պատահական չէ, որ Նարեկի քննական բնագրի աշխատասիրողներին վաստակաշատ նարեկացիագետ Ա. Ղազինյանը ՂԲ գլխի համապատասխան ծանոթագրության մեջ գրել է. «Այս գլուխը միշտ չէ, որ ձեռագրերում հաջորդում է ՂԱ գլխին (տե՛ս վերնագրի տողատակը): Գլուխների տարբեր հաջորդականությունն իր արտահայտությունն է գտել նաև տպագիրներում: Պ₁₋₃ - ում, ինչպես նաև Կ.Պոլսի 1782 և 1789 թթ. հրատարակություններում, ՂԱ գլխին հաջորդում են ՂԴ և ՂԵ գլուխները՝ ՂԲ և ՂԳ համարակալմամբ, որոնց էլ հաջորդում են ՂԳ և ՂԲ գլուխները՝ ՂԴ և ՂԵ համարակալմամբ: Հ. Նայանն իր մեկնության մեջ հետևել է Պ₁₋₂ - ի գլուխների այս հաջորդականությանը: Գլուխների այս հաջորդականությանն է հետևել նաև Թ. Գուշակյանը իր թարգմանության մեջ: Պ₄-ի հրատարակիչները վերանայել են գլուխների հաջորդականության կարգը: Հիմք ընդունելով հնագույն ձեռագրերի գլխակարգը, մենք ևս անփոփոխ ենք թողել այդ հաջորդականությունը: Գ. Խաչատուրյանը ՂԲ և ՂԳ գլուխները դրել է հավելված՝ առանց սակայն փոփոխելու գլուխների կարգը»¹⁵:

Այնուհետև մանրամասն ներկայացնելով այդ կապակցությամբ արտահայտված բոլոր տեսակետները՝ Ա. Ղազինյանը եզրակացնում է. «Ասենք նաև, որ կառուցվածքորեն սպասելի էր, որ ՂԲ և ՂԳ գլուխներն իսկապես լինեին վերջում՝ ՂԴ և ՂԵ գլուխներից հետո: Թերևս տեղաշարժն առաջացել է այն մտավախությունից, որ գրիչները կարող էին չընդօրինակել դրանք Մատյանում, ուստի ՂԵ գլուխն են դրել ավարտ՝ դավանաբանական ՂԲ և ՂԳ գլուխները անպայման Մատյանի կազմում պահպանելու մտադրությամբ: Հետևելով հնագույն և լավագույն ձեռագրերին, ՂԲ և ՂԳ գլուխները թողնում ենք Մատյանում՝ իրենց իսկ հաջորդականությամբ» (տե՛ս նույն տեղը, էջ 1112, ընդգծ. իմն է,- Հ. Մ.): Փաստորեն Ա. Ղազինյանը միանգամայն հնարավոր է համարում, որ ՂԲ և ՂԳ գլուխները լինեն համապատասխանաբար՝ ՂԴ և ՂԵ, իսկ ներկայիս ՂԴ և ՂԵ գլուխները՝ ՂԲ և ՂԳ, բայց՝ հետևելով անցյալից եկող ավանդույթին, աշխատասիրողները

¹⁵ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, էջ 1110:

դրանք թողել եմ նույն տեղում, որով ըստ էության խաթարված է մնում Մատյանի վիթխարի կառույցի ամբողջական տեսքը:

Իսկ ի՞նչ հիմքեր ունենք այսօրինակ պնդման համար:

Նայա՛ ինչպես ասվեց, բանասերները վաղուց եմ նկատել Մատյանի կառույց-վածքում ինչ-որ խաթարվածություն, որը չէն ժխտում նաև քննական բնագրի աշխատասիրողները:

Երկրորդ՝ արդեն վերը ցույց տրվեց, որ Մատյանն ստեղծվել է Պատարագի նմանությամբ, հետևաբար իր վերջնական տեսքով այն պետք է հար և նման լիներ Պատարագին: Իսկ, ինչպես գիտենք, Պատարագը, այսինքն՝ Հավատացյալների պատարագը կամ Բուն Պատարագը, անպայման ունենում է «Գոհության աղոթք», որով, ըստ էության, այն համարվում է ավարտված: «Գոհության աղոթքներն ու երգերը, - գրում է Վազգեն Վարդապետը, - վերջացնելով՝ քահանան լվանում է ձեռքերը, սաղավարտը դնում գլխին և իր պաշտոնը արդեն վերջացած լինելով՝ պատրաստվում է հեռանալ Սուրբ Սեղանից»¹⁶ (ընդգծ. իմն է. - Հ. Մ.):

Այստեղից հետևում է, որ Մատյանը նույնպես պետք է ավարտվի գոհության աղոթքով կամ գոհություն արտահայտող գլխով: Եվ, իսկապես, պարզվում է, որ Մատյանի 95 գլուխներից միակը, որ սկսվում է «Գոհանամ զքէն» դարձվածքով ու ամբողջությամբ գրված է գոհություն արտահայտող շնչով, հենց ժամհարի կոչնակին նվիրված ՂԲ գլուխն է, որի առաջին ենթագլուխն ունի հետևյալ բովանդակությունը.

«Գոհանամ զքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի եւ երկրի, Որդի աստուծոյ կենդանոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քոյ յիշատակի ի լրութիւն հնչման փայտիդ հրաւիրման, որով բախեալ գձայնարձակութեանցն զազդողարան՝ սթափեցաք, կանգնեցաք՝ ի վեր յարուցեալ ի մեռարիմակս թմբմանէ, ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք ի ժամ պաշտաման արհմաբանութեան՝ յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ հատուցմանս բեմի» (ՂԲ, տ. 1-8): Այո՛, բանաստեղծն արդեն գոհանում է Տիրոջից, որովհետև հենց ժամհարի կոչնակի հնչմամբ սթափվել, կանգնել, վեր է բարձրացել «ի մեռարիմակս թմբմանէ», ուստի Մատյանը բերել հասցրել է «ի ժամ պաշտաման արհմաբանութեան», որպեսզի Տիրոջը հանդիպի ուրախությամբ և դա՛ «հանդէպ հատուցմանս բեմի»: Վերջին արտահայտության արժեքն ու կարևորությունը ճիշտ հասկանալու համար բավական է հիշել, որ Մատյանի ԻԶ գլխում բանաստեղծը գրել է.

Յիշատակաւ բեմին՝ աստուծին ի դատաստանի,
Անծագելի մոայլ՝ չարատես աչացս երեւի,
Անձեռնկալ կապեալ՝ եղկելիս ի տարակուսի,
Ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի,
Յոյժ անարեւ եւ անվերարկու՝ ի տարտարոսի,
Անապաւէն մոլար՝ մորմոքեալ ի հուր գեհեհնի,
Անյայտնելի կորուստ՝ կործանեալ ի մեղաց վհի:

Այնքան ակնհայտ է բանաստեղծի տրամադրության փոփոխությունը, որ, թվում է՝ ավելորդ է դա ցուցադրելու փորձ կատարել: Ասեմ միայն, որ եթե ԻԶ գլխում բեմի մասին խոսում է լոկ որպես հուշ ու հիշատակ, ապա ՂԲ գլխում, ընդհակառակը, ցնծում է այն վերստանալու ուրախությունից: Հետևաբար, որքան քննական էր «անծագելի մոայլ», «անձեռնկալ կապեալ», «անվերարկու՝ ի տարտարոսի», «անապաւէն մոլար» վիճակների համար հեղինակի նախկինում ունեցած անհուսության զգացումը, նույնքան էլ հասկանալի է այդ վիճակից ազատվելու, կորցրած բեմը վերստանալու առթիվ նրա ցնծագին ուրախությունը:

¹⁶ Վազգեն Վարդապետ, Աշվ. աշխ., էջ 111:

Նույն ՂԲ գլխի Բ ենթագլխում բանաստեղծն Աստծուն փառաբանում է արդեն այն բանի համար, որ «այսքանեալք հնարաւորութեամբք» հոգացել է իր փրկության մասին: Ընդ որում, Աստված դա արել է «հանդարտ գործեալ վայելչականաւ փայտի անաւթոյ առ քունս անյարիր սաստիկս որոտացեր, որպէս թէ ընդ ծուլութեանս դանդաղութիւն զյանդիմանութիւն խրատող խառնեցեր, ի հայրենի սիրոյդ հեզութիւն գուժնութիւն ճայթմանն յարեցեր, յընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրեւեցեր, ոչ մեղմութեամբ մեղմական վանկիւ միրհմամբ ընկղմեցեր եւ ոչ անխնամաբար ահաւորութեամբ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր» (տ. 12-18):

Այնուհետև ծնրադրաբար երկրպագում է ամենքի Ստեղծողին, որ իրեն կենդանացրել է «ի դադարմանէ դժոխական անբանութենէ» և Երրորդության հետ «զծագրութիւն զկապն երեքլին իմ վնասակարին ի կատարածին սովիմբ» կրկնել: Հետաքրքիր է, որ թեև բանաստեղծն իրեն զգում է ներված, որի համար ցնծում է ուրախությունից, բայց և այնպես ինչ-որ վախ ու անվստահություն ներքնապես անհանգստացնում է նրան, ուստի Տիրոջից խնդրում է, ասելով՝ «զերծո՛ղիս յամենեցունց ընդդիմացողաց» (տ. 173): Չմտածե՛լ արդյոք, որ ներվելուց ու արդարացվելուց հետո նույնպես Նարեկացին ունեցել է ինչ-որ ընդդիմացողներ, որոնցից էլ ցանկանում է Աստծու օգնությամբ ազատվել:

Նախավերջին ենթագլխում արդեն Աստծուց խնդրում է. «Ընձեռեալ տացե՛ս, տէր, տագնապելոյս անձրեւ արտասուաց: Եղիցի՛ քեւ սա մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուագ հանգստեան, միտք երանութեան, պատճառ փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խզումն խեղճանաց, ընդարձակութիւնն նեղութեանց, համառատումն խեթմանց, հալածումն հեծութեանց, թեթելութիւնն թառաշմանց, յապահովութիւն կարեաց, կարգադրութիւն կրից, սփոփութիւն վհատմանց, բժշկութիւն ցաւոց, տեսականութիւն հեղգութեանց, ուշադրութիւն անտեսիցն» (տ. 188-196): Դժվար չէ տեսնել, որ քնարական հերոս Նարեկացին այլևս առաջվա պես չի տանջվում ու տառապում, չի ողբում ու աղաչում, այլ, ընդհակառակը, երանելի ցնծությամբ օրհնաբանում է Տիրոջը՝ ցանկանալով, որ այսուհետև կոչնակը լինի միայն աստվածային բարի կամքի դրսևորումների ազդարար:

Երրորդ, ըստ էության նույն հանգիստ ու խաղաղ շունչն է զգացվում նաև ՂԲ գլխին հաջորդող, նրա հետ սերտորեն կապված, նրա տրամաբանական շարունակությունը, հետևաբար և Մատյանի ավարտը հանդիսացող ՂԳ գլխում: Այդ է հաստատում ոչ միայն վերջինիս բովանդակությունը, այլև «Այն՝ իմ ձեռնարկութիւն ի սրբութիւնսն, եւ այս՝ արձանագրութիւն ի սրբութեանցն սրբութիւն» վերջվածքը¹⁷: Որ ՂԲ գլխի գոհության աղոթքին կարող էր հաջորդել համանման մեկ այլ աղոթք, դա նույնպես հաստատվում է Պատարագի կառուցվածքով: Թեև «Գոհության աղոթք»-ով ըստ էության ավարտվում է Պատարագը, բայց այն դեռ կարող է շարունակվել: «Գոհության աղոթք»-ից հետո, երբ Սարկավագի «Օրհնեա՛, Տէր»-ով բացվում է վարագույրը, գրում է Վազգեն Վարդապետը, «քահանան արտասանում է իր վերջին աղոթքներից մեկը: Հովհաննէս Ոսկեբերանի խմբագրած աղոթքներից մեկն է, շատ սիրված մեր ժողովրդի կողմից: Մ'աքոր ու ազնիվ ներշնչումով հորինված աղերսներ են, որոնք, իրև վերջին խնդրանք, պատարագի քահանան ուղղում է առ Աստված»¹⁸:

Դիտելի է, որ թեև ՂԲ և ՂԳ գլուխներում արմատապես փոխվում է տիրապետող տրամադրությունը, բայց և այնպես առանձին դեպքերում դեռ զգացվում է նախկին հոգեվիճակի թողած նստվածքը: Այդ է պատճառը, որ հեղինակը

¹⁷ ՂԲ և ՂԳ գլուխների կապի մասին տե՛ս քննական բնագրի համապատասխան ծանոթագրության մեջ (էջ 1121, ծան. 9):

¹⁸ Վազգեն Վարդապետ, նշվ. աշխ., էջ 112:

մերթ ընդ մերթ ակամա վերհիշում է դառն անցյալը, մի պահ սուսկում ու մոայլ-վում, բայց շատ շուտով կարողանում է մտքի անսպասելի փայլատակումով մոայլը վերածել լուսի՝ ցնծացնելով ընթերցողի հոգին ու միտքը: Օրինակ, ՂԳ գլխի 457-459 տողերում կարդում ենք. «Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ ի նոյն պատկեր յայտնութեան իրի, վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն, որ ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ արհնեալ» (ընդգծ. իմն է. - Հ. Մ.)*

Վերջին ենթազիխում, որով հենց պետք է եզրափակվի Մատյանը, բանաստեղծը, մեկ անգամ ևս վերհիշելով ոչ վաղ անցյալում իր ունեցած տխուր վիճակը, ասում է. «Եւ քանզի իբր անհաս, ոչ ըմբռնական այս մեծ զարութիւն, արագ պլացմամբ ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ո՛չ արինակեցաւ կցորդաւ, ո՛չ նմանեցաւ զուզամասնութեամբ, ո՛չ սահմանեցաւ ձեւակերպութեամբ, ո՛չ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ աստուածեան խաչիդ նշանի հաւասարութեամբ արեան կեցուցչիդ հոգիապէս զերազանցեցաւ» (ՂԳ, տ. 515-521):

Ընդգծված մտքերից հատկապես ուշագրավ է «լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ, փակեցաւ յինէն» արտահայտությունը: Նախ ասենք, որ ըստ ՆՂԲ-ի, «միջոց» բառը գործածվում է թե՛ տարածության և թե՛ ժամանակի իմաստով: Երկրորդ, թեև ՆՂԲ-ն որպէս «լայն» բառի տարածական իմաստ արտահայտող օրինակ բերում է նաև Նարեկացու այս հատվածը՝ «լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ» (հ. Ա., էջ 877), սակայն ես հակված եմ մտածելու, որ այստեղ «լայն իմն միջոցաւ» արտահայտությունը ավելի շատ ժամանակային իմաստ ունի, քան տարածական: Բանն այն է, որ Առաքելոց ներթողում Նարեկացին միջոց բառը խիստ որոշակի գործածում է ժամանակային իմաստով, ասելով՝ «ի սկիզբն ծայրից անջրոպետ եզերաց ընդարձակ ամաց միջոցի աստուստ նկատեալք»: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ «ընդարձակ ամաց միջոցի» դարձվածքի պես «լայն իմն միջոցաւ»-ը նույնպես գործածված է ժամանակային իմաստով: Բայց եթե ընդունենք, որ Նարեկացին այն գործածել է հենց տարածական իմաստով, ապա դրանով մյուտոնից բանաստեղծի զրկվածության փաստը մեջտեղից չի վերանում: «Բանզի հայտնի է, որ «Հավատացյալների պատարագի» սկզբում հնչող Սարկավագի հրամանից հետո «ժողովրդի մի մասը՝ նրանք, որ թերահավատ, ապաշխարության մեջ կամ անմաքուր էին, դուրս էին ելնում եկեղեցու ասյանից և մինչև պատարագի վերջը մնում էին գավթի մեջ, աղոթում կամ Ս.Գրքից ընթերցումներ էին կատարում»¹⁹: Ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որք Նարեկացին այս դեպքում ավելի թափանցիկ է ասում այն, ինչը Մատյանի մյուս գլուխներում հայտնել էր ծածկագրությամբ²⁰. Խոսքը վերաբերում է նրա կարգալուծության փաստին: Հարկավ այս դեպքում ևս Նարեկացին բացեիբաց չի ասում, որ ինքը կարգալուծ է եղել, այլապես ինչ է նշանակում կուսակրոն հոգևորականի համար սրբալույս Մյուտոնի «փակվելը», եթե ոչ նրանից զրկվելը:

Հաշվի առնելով Մատյանի կառուցվածքը հասկանալու համար ՂԳ գլխի խիստ կարևորությունը՝ հիշենք նաև, որ վերը բերված հատվածից մի քանի տող հետո Աստծուց խնդրում է՝ ասելով «արա՛ սովաւ փրկութիւն, տո՛ւր եւ քաւութիւն, պարգեւեա՛ բժշկութիւն, հանդերձեա՛ շնորհ, առատաձեռնեա՛ երանութիւն: Յաւժումն այս ձիթոյ երկնանձրեւ լուսոյ անարա՛տ գոտայց. յիդեալս այս թեզան բանաւորական մի՛ մտցէ եւ մի՛ գրաւեսցէ տխրականութիւն աղտոյ մեղանաց՝ շաղախել երբէք զոգուոյս կերպարան: Եղիցի՛ սոյն ինքն, որոց մատչին արձանիլ

¹⁹ Նույն տեղում, էջ 73:

²⁰ Այդ մասին տե՛ս Հ. Միրզոյան, Նարեկացու անեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1:

սովաւ, Բարսնապաճոյճ պանծանաւք պճնել գեղայարէն, սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ: Եղիցի՝ հուրս այս լուսափառ եւ աստուածածիր մերձեցելոցն ի սոյն ընտրութիւն մոլխ կրկնեռաց եւ բարեփափագ ջերմութեան այլ յարիճուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութեամբ ի կարծրակա-
նումդ անասան վիմիդ յարակայեցեալ՝ մի՛շտ արծանացայց՝ ի քեզ հաստատեալ աներկմտելի: Լիցի՝ նշանակ վերնամրցանակ այսր պարգեւի սովաւ վառելոցն՝ ո՛չ ողողիլ ջուրք, ո՛չ այրիլ հուրք, ո՛չ ցրտանալ ի սառնութենէ, ո՛չ վնասակար հող-
մով շիջանիլ, ո՛չ աղտեղիլ յուրուական ինչ պղծութենէ, ո՛չ զպահեալսն չարին մատնել եւ ո՛չ ի ստորեւ ելիցն զմթերս գանձուն կենաց յիմարաբար արտաքս հա-
նել, ո՛չ անպատասպար մնալ ի թեւոց քոց ազնութենէ եւ ո՛չ զէացեալսն ի մեզ ա-
ծութիւն անմաքրապէս ի բաց մերկանալ: Այլ եղիցու՛ք քեւ ի սոյն հրացեալ, սո-
վիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ, ազատացեալ, պսակեալ եւ թագաւորեալ» (տ. 525-545):

Ինչպէս տեսանք վերը, բանաստեղծը պարզորոշ հայտնեց, որ մյուտոնը կամ իր բառերով՝ «այս մեծ զարրութիւն»-ը «լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ, փակե-
ցաւ» իրենից, ահա թե ինչու այստեղ Տիրոջից խնդրում է, որ այլևս մյուտոնով օծ-
ված որևէ մեկի հետ մնան բան չպատահի, այսինքն՝ «ո՛չ անպատասպար մնալ ի
թեւոց քոց ազնութենէ եւ ո՛չ զէացեալսն ի մեզ աւծութիւն անմաքրապէս ի բաց
մերկանալ»: Այլ թող այսուհետև քեզնով լինենք «ի սոյն հրացեալ, սովիմբ պա-
րարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ, ազատացեալ, պսակեալ եւ
թագաւորեալ»:

Չորրորդ, Մատյանի թուր գլուխներից ամենաշքեղ ու ամենածավալուն փա-
ռաբանական խոսքերը գտնում ենք հենց ՂԳ գլխի վերջում, և դա միանգամայն
հասկանալի է: 2է՞ որ, իբրև ավարտ, այն պետք է հնչեր ամենից ուժեղ ու հա-
րուստ, քան մյուս գլուխների վերջվածքը: Համեմատության համար բերում ենք
վերջին երեք գլխի վերջվածքները, որոնցից, վստահ եմ, պարզ կդառնա, թե որ
գլուխը որտեղ պետք է լինի: Եթե ՂԴ գլուխն ունի՝ «Եւ քեզ ընդ Հար, Հոգուվդ Սր-
բով // Փա՛ռք եւ իշխանութի՛ւն յավիտեանս յավիտենից: // Ամէն» վերջվածքը, իսկ
ՂԵ գլուխը՝ «Ընդ որում քեզ փա՛ռք, // Եւ հոգուդ Սրբոյ բարեբանութի՛ւն՝ // Վայել-
չական գոհութեամբ // Այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: // Ամէն» վերջված-
քը, ապա ՂԳ գլխի վերջվածքը, նախորդելով սրանց, հնչում է այսպես. «Եւ քեզ
միայնոյ՝ միայն աւծելոյ յամենեցունց արհնութի՛ւնք երգոց, ալէլու՛ք լեզուաց,
հնչմունք ձայնից, յաղթականութի՛ւնք գովեստից, բարեբաստութի՛ւնք շրթանց,
սրբաբանութի՛ւնք սաղմոսաց՝ ընդ Հար եւ Հոգուդ Սրբոյ յաիտեանս յաիտենից:
Ամէն»: Ուստի բնական է, որ հենց ՂԳ գլխով ավարտվեր Մատյանը և ոչ թե ՂԵ
գլխով, ինչպէս այժմ է:

Հինգերորդ, Մատյանի ՂԱ, ՂԴ և ՂԵ գլուխները իրենց տրամադրությամբ
ու տրամաբանությամբ սերտորեն կապված լինելով իրար հետ՝ յուրաքանչյուր
հաջորդ գլուխը հանդես է գալիս որպէս նախորդի շարունակություն ու զարգա-
ցում, մինչդեռ ՂԲ և ՂԳ գլուխները, զետեղված լինելով ՂԱ և ՂԴ գլուխների
միջև, ընդհատում են դրանց կապը, իսկ իրենք չեն կապվում ոչ նախորդի և ոչ էլ
հաջորդի հետ: Բանն այն է, որ ՂԱ գլխում հեղինակը, դիմելով Աստվածորդուն,
նրանից խնդրում է.

- Եւ ընդ սաստիկ ծանրութեան ցառոցս՝
Եւ գբե՛ոն պարտեացս թեթևացո,
Չոր ի լուրանի մտացս ամփոփման մահճացս անկողնի,
44 Ուշաբերեալ գլուսահատութեանցն դառն պտղոցն...
Հանգո՛՛ր՝ զվաստակեալս ի բազմածուփս աշխատութենէ,
Բա՛րձ գտագնապ տարակուսանաց ոգոյս կործանման,
Ջղատութիւնն ընդ վշտացն,

- Զհեծութիւնն ընդ կարեացն,
 Զանձկութիւնն ընդ թշուառութեանցն,
 53 Զհատաշմունսն ընդ խորտակմանցն,
 Զքեկութիւնսն ընդ ապշութեանցն...
 58 Աւժանդա՛կ լեր տկարութեան բազմատխորս տարտամութեան...
 Հատո՛ղ զչարաշար հեծութիւն կորստականս խեղդման,
 Զնոր գիտ չարին, զհին խարդախութիւն բանասրկոյին,
 65 Զատար ազդեցմունս ի մահ կրթողին...
 Անսխալ հոգով եւ անշաղախ մարմնով
 80 Զապաւիճեալս ի քե՛զ հանդերձեա
 Ի շնչմանէ հողմոց, ի զարկմանէ բռնութեանց,
 Ի բախմանէ փոթորկաց, ի յոստմանէ մրրկաց,
 Ի յարձակմանէ գազանաց:
 Ի կափման աշացս հայեցուած սրտիս մի՛ ստուերացի,
 Այլ զուարթացի՛, պայծառացի՛, վայելչացի՛,
 Ընդ քե՛զ փայլեցի, տէր Յիսուս Քրիստոս,
 Լուսաւոր վառմամբ անշիջանելեա:

Ինչպէս տեսնում ենք, բանաստեղծը դեռ գտնվում է հոգեկան տվայտանքների մեջ՝ տխուր ներկա, անվստահելի ապագա, նաև՝ զվարթության, պայծառության ու բարձր տրամադրության հույս ու սպասում:

Գրեթե նույն տրամադրությունը, նույն տազնապն ու սպասումն ենք տեսնում նաև ՂԴ գլխում, որտեղ Աստծուց խնդրում է.

Առաքեա՛ զպահպանողական զարութիւն աջոյ քոյ
 Եւ փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի եւ ի դիւէ չարէ...
 Ամաչեցե՛՛ սատանայ, քակտեցի՛ն մեքեճայքն,
 Բարձցի՛ն որոգայթքն, պարտեցի՛ն մարտուցեալքն,
 Պակասեցի՛ն զէնքն սայրասուրք,
 Մերժեցի՛ մէզն, փարատեցի՛ խաւարն, մեկնեցի՛ մատախուղն...

Առ Աստված ուղղված խնդրանքը, հույսն ու սպասումը ավելի որոշակի ու թանձրացական են դառնում վերջին՝ ՂԵ գլխում, որտեղ, հիշեցնելով Աստվածորդու մարդացումն ու հանուն մարդկության կրած չարչարանքները, տանջանքներն ու տառապանքները, բանաստեղծը գրում է.

Բարձցի՛ն վտանգք մեղուցեալ դատապարտելոյս,
 Թողցի՛ն պարտիքն, ապաքինեցի՛ ամաւթն,
 Մոռացի՛ն պատկառանքն, բարեգործեցի՛ն դատակնիքն,
 Սատակեցի՛ն որդունքն, վերացի՛ լալն,
 Հանդարտեցե՛՛ կրճումն ատամանցն,
 Սպառեցի՛ն ողբքն, հատցի՛ն արտասուքն,
 Մերժեցի՛ սուգն, հալածեցի՛ խաւարն...
 Զի ամենայնի մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
 Ծնորհաւք քո, գթած, ի քեզ զարացեալ՝ քեւ նորոգեցայց,
 Զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ՝
 Ի յարութեանն արդարոց, Հաւր քում արհնեցեալ:

Փաստորեն Մատյանի ՂԱ, ՂԴ և ՂԵ գլուխներում դեռ տիրապետող է այն նույն տրամադրությունը, որով բանաստեղծն սկսել ու իրականացրել է Մատյանի արարումը՝ դատապարտված վիճակ, ողբ ու աղաչանք, նորոգման և անմահ կենդանության հույս ու երազանք, անասան հավատ առ Աստված և այլն: Այս պարագայում բնական կլիներ նույնը տեսնել նաև ՂԲ և ՂԳ գլուխներում: Մի՛նչդեռ, ինչ-

պես տեսանք, այդ գլուխներում դրսևորված տրամադրությունը, հոգեվիճակը, զգացումն ու ապրումը տրամագծորեն հակառակ են ամբողջ Մատյանի ու հատկապես դրանց նախորդող ՂԱ և հաջորդող ՂԴ և ՂԵ գլուխների ոգուն: Բանն այն է, որ եթե ՂԱ բանում բանաստեղծը Տիրոջից խնդրում էր, որպեսզի «ի կախման աչացս հայեցուած արտիս մի՛ ստուերասցի, // Այլ զուարթասցի՛, պայծառասցի՛, վայելչասցի», իսկ ՂԵ բանում՝ որպեսզի մարմնի մեղքերից ամեն ինչով մահացած իր հոգին Տիրոջով զորանա ու նորոգվի՝ «Ջատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ», ապա ՂԲ և ՂԳ գլուխներում արդեն բանաստեղծը իրեն զգում է զվարթացած ու պայծառացած, պարզապես ցնծում է վաղուց սպասված բաղձալի հաղթանակի պատճառած անհուն ուրախությունից: Այստեղից հետևում է, որ բանաստեղծը Մատյանի ՂԲ և ՂԳ գլուխներն ավելացրել է առաջին 93 գլուխները գրելուց ինչ-որ ժամանակ անց՝ իր կյանքում տեղի ունեցած կտրուկ շրջադարձից, այսինքն՝ ներվելուց և հոգևորականի նախկին վիճակին վերադառնալուց հետո:

Թվում է՝ վերը ասվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ, իսկապես, Նարեկացու Մատյանը կառուցված է Պատարագի մեանությամբ: Այդ դեպքում, մի կողմից, անհամեմատ հեշտանում է նրա բովանդակության յուրացումը, իսկ մյուս կողմից՝ հնարավոր է դառնում բացատրել Մատյանի կառուցվածքի ներկա խաթարվածքը, հետևաբար և վերականգնել ամբողջական կառուցվածքը: Այսպիսով, Մատյանի ՂԲ և ՂԳ գլուխները պետք է տարվեն վերջ՝ ՂԵ գլխից հետո, որով այն կգտնի իր ամբողջական ու վերապաց տեսքը:

Г. К. МИРЗОЯН - К вопросу о построении "Нарека". - С новой точки зрения рассматривая содержание "Книги скорби" Нарекаци и сопоставляя ее с Сурб Патарагом (Литургией), автор статьи показывает, что поэма Нарекаци, написанная по подобию Литургии, также состоит из двух частей. В первой части (главы 1-54) поэт на собственном примере со всею глубиной и многогранностью вскрывает и обсуждает телесные и душевные недостатки, слабости, пороки и недуги человека как существа земного; во второй же части (главы 55-95) представляются те, требующие титанических усилий, пути, на которых он очищается и достигает небесных высот.

При таком подходе становится возможным не только лучше понять содержание "Книги", но и выявить в ней ряд фактов, событий личной биографии поэта, а также внести поправку в принятое построение ее текста. Автор, в частности, доказывает, что заключительные в принятом тексте главы 94-95 должны помещаться перед главами 92-93. Первоначально, по мысли автора, "Книга" состояла из 93-х глав. Главы, обозначаемые ныне как 92 и 93, отсутствовали. Добавлены они была спустя некоторое время, в связи с произошедшей в его жизни просветляющей переменой. Поэма в составе 93 глав была создана Нарекаци в годы лишения сана, опалы. Спустя время он был прощен и восстановлен в прежнем духовном своем сане, в связи с чем и были написаны главы 92-93 и "Книга скорби" обрела органичное свое завершение и полное композиционное сходство со Св. Патарагом.